

ուստի և մանուկներին համար մեծ դժուարութիւն է և միանգամայն փնաս անծանօթ լեզուով սկսել ուսումը. ըստորում նախ որ՝ նա այդպիսով զիտութիւնից և ուսումից զուրկ կմնայ, և երկրորդ որ անգիր անելով օտար լեզուի բառեր՝ կրթանայ նորա միտքը. վասն որոյ կարեւոր է համարուում նախ մայրենի լեզուի միջոցաւ զարգացնել երեխայի միտքը և պատրաստել նորան այնպէս՝ որ նա կարողանայ հեշտութեամբ ըմբռնել ընդհանուր ուսումնարանների այս կամ այն ուսման մասունքը, ինչպէս այդ ձեռով ընթանում են այժմ Բրուսիոյ ուսումնարաններն ևս նորա օտարալեզու հպատակների համար:

Արվիասեան արքունի ուսումնարաններում ուսում առնող Հայերի թիւը Պ. Հոգաբարձուի որոշմամբ հետեւեալն է: Աւար, ժարաններում և նախակրթարաններում, Ռուսներից յետոյ աշակերտների մեծ մասը Հայերից է բաղկանում (500ի չափ), գաւառական ուսումնարաններում մեծ մասն առհասարակ Հայերն են: \*):

Եյսպէս ուրեմն Արվիասեան ուսումնարանների Պ. Հոգաբարձուի արժանահաւատ վկայութիւնից տեսնում են՝ որ մեր Հայերը շատ սիրով և մեծ թուով ուսանում են Տէրութեան ուսումնարաններում. եթէ վեր առնենք Մոսքուայի

Ազգարեան Ղ'եմարանի և մասնաւոր ուսումնարանների Հայ աշակերտների թիւը որ մինչ 150ի կհասնի, տէրութեան զինուորական կամ քաղաքական ուրիշ ուսումնարանների Հայ աշակերտները, որ թերեւ 50 ից աւել լինի, նմանապէս Պետերբուրգու, Մոսքուայի, և Վորպառի համալսարանների և այն բարձր ուսումնարանների ուսանողաց թիւը՝ որ 150 ից աւել կարող է լինել, եթէ ասում եմ վեր առնենք այս բոլոր կրթուող Հայ աշակերտելոց թիւը հոգաբարձուի ներկայացրած թուի հետ միասին, տեսնում ենք որ 1795 Հայ միայն Հայոց դաւանութեան՝ Տէրութեան ուսումնարաններում կրթուում են մեծ մասամբ իրանց օրական ապրուստը ապահովելու համար ի հարկէ: Բայց այդ թուի հետ պէտք է դումարել և մեր ազգային ծխական և հոգեւոր դպրոցների աշակերտների թիւը, որ զույգէ դրա կրկնապատիկից աւել լինի:

Խօսքս վերջացնելու ժամանակ միանգամ ևս հրաւիրում եմ ընթերցողին ուշադրութիւն դարձնել վերեն ներկայացրած մի քանի մտածմունքների վերայ մեր ընդհանուր Հայերի նկատմամբ: "Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ":

ԾԻՒԼԿԵՆ ՈՒՍՈՒՄՆԵՐԵՆՆԵՐ

Ե.

Երբ արտի շրջաբերականիցը մի ներքին ուրախութեամբ տեղեկանում ենք Հայերի զանազան տեղերում արած ջանքին և գործին-իւրեանց որդւոյ՝ (թէ աղջկե-

(\*) Պ. Հոգաբարձուն այս որոշելու ժամանակ ի նկատի է ունեցել ընդհանուր թիւը վարժարաններում և նախակրթարաններում, բայց եթէ վեր առնենք այն տեղերի Գիմնազիէքն ու Պրօգիմնազիէքն, որտեղ Հայ ժողովուրդը շատ է, այն ժամանակ կտեսնենք որ նրանցում մեծ մասը Հայերն են, յետոյ Ռուսներն և ըն:

բանց և թէ տղայոց, կըթուլթիւն և դաս-  
տիարակութիւն տալու համար:

Աւրախալի է Հայի համար ասում ենք,  
երբ ընդհանուր շարժումն կայ դէպի յա-  
ռաջ, ընդհանրութեան մէջ: Աւրախալի  
է թող ասենք՝ որ մեր Ազգապետի իմաս-  
տուն յատակազիծ շարունակութեան ըս-  
կիզբն է առել, երբ չորս հազար տարուայ  
ազգի փոքրութիւն մնացորդը 19րդ դարու  
հետ քայլեր է անում, քայլեր . . որոնք  
երեսայականի թող նմանացնենք. բայց և  
այդպէս ևս զարգանալու և հաստատուե-  
լու ճանապարհի վերայ տեսնալով ոգի  
կոտանանք:

Բ.

Սխական ուսումնարաններ, որոնք հա-  
տարակաց սեպհականութիւն են, օր ըստ  
օրէ բազմանում են թուով, մինը միւսին  
նախանձուելովը մին միւսից օրինակելով  
և վերջապէս օր և իցէ կերպով: Ի՞նչ է  
սորա խորհուրդը. ո՞չ ապաքէն այն, որ  
զիւղացի և ռամիկ Հայը սոցա միջնոր-  
դութեամբ տեղ և կոչունք է ստանում  
հասարակաց սեղանին վերայ. նա վերջա-  
պէս կարող է զոցա միջնորդութեամբ  
թողնել և զգուել փտած և բորբոսնած  
կեանքիցը և անշարժութիւնից՝ որոնց  
մէջ դարեր է մաշել և գործել այժմինչ-  
պէս մարդ, թող այդ տեղ միայն ա. Ժ.  
Տ. Խ. Գ. Դ., ուսուցանվին առ ժամն,  
բուական է միայն սկսել մի գործ, քան  
թէ չսկսել երկիւղ կրելով Հայոց սխա-  
լանքներից և մնասից, — Ի՞նչու, որովհե-  
տեւ մի բան նոյ՛, իսկ սկզբումը կատարել  
պահանջելը . . . և այդպիսի հասարա-  
կութիւնից, որի ճաշակին նոր է ընտելա-  
նում, այդ բանը խղճմանքից հեռու է:

Գ.

Ի՞նչ է հարկաւոր մեր ծխական կամ  
զիւղական ուսումնարաններին . . — մի բա-  
նիմաց և հասարակաց օգտին ծառայող  
քահանայ, կամ այդպիսի մի երկու երի-  
տասարդներ. (եթէ Աստուած տուել էր  
զիւղացւոց այդպիսի բաղաւորութիւն) և  
զլեւաւորապէս ընտիր և բարի առաջ-  
նորդներ կամ փոխանորդներ թեմերում,  
որ ներգործեն ժողովրդի մէջ յօգուտ այդ  
նպատակին խրախուսելով և օգնելով՝ որ-  
պէս ժողովրդին՝ նոյնպէս և քահանային  
կամ երիտասարդին՝ որ այդ հասարակու-  
թեան մէջ ներգործող մշակն է և միշտ  
քրտինք է թափում:

Առաջնորդի կամ փոխանորդի անցեա-  
լումը ունեցած քաղաքական նշանակու-  
թիւն կորել են. Առաջնորդը կամ նորա  
օգնականը այժմս ունի մի վսեմ բարոյա-  
կան պարտականութեան և գործունէու-  
թեան ասպարէզ: Հայը ունի իւր նախ-  
կին յարգանք և լսողութիւն դէպի իւր  
հոգեւորականը. այս աներկբայելի գրաւա-  
կան կարող է դառնալ առաջնորդի ձեռին  
կատարելու իւր բարի և խոհեմ նպատա-  
կը, որ թէև բաժանվում է երկու մասի  
(կրօնական և մարդկային), բայց այդ եր-  
կուսի բուն նպատակը կազմում է մի բա-  
նական էակի միմիայն կատարելութիւնն  
միասին. և ահա բարձր կոչումն՝ որ բացա-  
տրվում է "առաջնորդ" բառով՝ տվում է  
այս նպատակին ծառայող հոգեւորականին:

Դ.

Մեծ բան չէ եթէ կարողութիւնով,  
թուով և հասկացողութեամբ մեծ ժո-  
ղովուրդը կատարում է մեծ բան. այդ

պարտականութիւն է և բնական համե-  
տութիւն. մեծի պարտքն է և պարծանքն  
է լինել և գործել մեծագոյնը: Իմ համար  
նշանակութիւն ունի աղքատ գեղջուկի  
գործը, թէ և իւր պէս դարձեալ աղքատ  
և գեղջուկ լինին այդ գործերը՝ այդպէսին  
էլ ուղիղ համեմատութիւն է: Ոչ ինչ  
բան անտեղի չէ քան թէ անգործութիւն  
և մեռելութիւն մէկ խօսքով: Երկրա-  
գործութիւնը ամենահաստատուն հացն  
է մարդու համար՝ ապահով լինելով երկ-  
րագործութեան հացովը. մարդս կարող է  
լինել երջանիկ՝ միայն թէ գիտակցութիւն  
ևս ունենար իւր այդ ասուած երջանկու-  
թեան: Եւ նա, որ ուսուցանում է գիւ-  
ղացուն, տալիս է նորան ահա այս գիտակ-  
ցութիւնը՝ որով և կացուցանում է նորան  
երջանիկ:

Ե.

Հասարակաց օգտին ծառայելը քրիս-  
տոնէական և մարդկային պարտք է. նա  
ինքն իւր վարձատրութիւն, մխիթարու-  
թիւն, յոյս, նպատակ և ամեն բան էլ է  
բարոյական կողմի համար. բայց դալով  
նիւթականին, և մտածելով՝ որ մարդս  
ըստ մեծի մասին նիւթական է, ապա հե-  
տեւեցնելու է, թէ նորան ևս պիտոյ է և  
նիւթական փոխարինութիւն:

Երկնքի և երկրի բարիքը վայելելով  
մենք պաշտում ենք զՆստուած. արքայու-  
թեան ակնկալութեամբ լինում ենք առա-  
քինի: Եւս համառօտ խորհրդածութիւն-  
քը առաջարկելով ժողովողին և ժողովը-  
ղի հովիւներին՝ դառն սնք մեր միւս մասին:

Ե. Յ.

# Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Վ.ԱՍԵԿԻ ԱՊԵՇԵԼԵՆՔԸ.

Վշտերից չարատանջ Հայ—Վասակն ուրացած  
Հրջում էր թափառուն անհանգիստ երերված.  
Եյսպէս նա քրտնաթոր արեւով միջօրեայ  
Կանդ առաւ հանգչելու կաղնու տակ հինօքեայ.  
Ծաղկեցան ծունկերը, թեք տուեց արմունկին,  
Խոր հոգեոց քաշելով աչք ածեց դէպ երկին.  
Եւ կարծես բիւր ասեղ, բիւր նիզակ ու սուսեր  
Երկնքի թագուհին սիրտն ի խոր կըցցէր:

Նա կրկին հառաւ, և ձայնով դող ի դող  
Աողկողաց դէպ արեւ, որ կալած թեթեւ քող  
Սպիտակ որպէս ձիւն փետրային ամպերից  
Կամենում չէր ցոյց տալ մի մարդու մեղսալից.

Իւր պատկեր կուսական, մի մարդու դաւաճան,  
Որ բերել էր ամօթ մարդկային վնհ անուան.  
Հառաչեց, կողկողաց դառնութեամբ լալագին  
Դէպ ի հարսն ամբիժ կամարին երկնային:

"Լուսատուդ փառահիշ, թագուհիդ աստղերի,  
Գերապանձ նազելիդ կատուտակ կամարի,  
Որ անշարդ սցս երկրին պարզեւում ես դու կեանք,  
Զօնելով հողածնին լուսածին փայլալայնք:

"Դու, որիդ կենարար շողերովը ջերմիկ  
Կցնծայ ու կերգէ և՛ ամեն մի թռչնիկ,

Աղաչում եմ նայիւր թշուառիս քաղցրարար  
Կհասնէ՞, ո՞հ, արդեօք տանջանացս կատար:

Ո՞հ, դու, աչքդ՝ ստուծայ՝ ի հսկումն աշխարհիս,  
Երբ կգայ ինձ փրկել բոլբոլ իմ մահիս,

Ո՞հ, ասա, աղաչեմ, արգեօք Տէրն երկնքի,  
Երբ այստեղ հասանէ վախճանը իմ կեանքի,

Վճռած չէ՞ մասնելու աղէտքի մշտական  
Մի ինձ պէս... սարսափիմ... աղղաղրուժ դաւա-  
ճան:"

"Ազդարուժ"... նա կրկնեց, և հոգին տատանեց,

"Դաւաճա՜ն"... հեկեկաց, և արցունք յորդ թափեց:

"Վա՛շ ու վա՛շ թշուառիս, ի՞նչ սարսափ ա-  
հարկու..."

"Ուղարկիր, ո՛վ երկնք, ինձ մի շանթ մահատու..."

Եւս գոչեց, թմրեցաւ և մի նինջ ծանրացած  
Երնայից աչքերին Վասակի ընկաւ ցած: